



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

31 օգոստոսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի
Անդամակցությամբ՝ Հ. Թովմասյանի
Ֆ.Թոխյանի

Քննության առնելով Մարիամ Ոսկանյանի
անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Մարիամ Ոսկանյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան վերստին ներկայացվել և մուտքագրվել է 2018 թվականի օգոստոսի 13-ին)՝ խնդրելով. «Որոշել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 10-րդ և 60-րդ հոդվածներին համապատասխանելու, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածին համապատասխանելու հարցը»:

2. Դիմողը նշում է, որ իր և ամուսնու համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված բնակարանը առանց իր իմացության և համաձայնության գրավադրվել է, ինչի հետևանքով ինքն արտադատական կարգով և իր կամքից անկախ զրկվել է իր սեփականությունից:

Դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշման և Սահմանադրական դատարանի 24.02.2012թ. ՄԴՈ-1009 որոշման միջև առկա հակասությունը չի հաղթահարվել, ինչի արդյունքում վիճարկվող նորմը իր նկատմամբ կիրառվել է Սահմանադրությանը և Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1009 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին հակասող մեկնաբանությամբ:

Դիմողի կարծիքով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի և Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշումների միջև առկա հակասության պայմաններում իրավունքի սուբյեկտները դրսևորում են իրավաչափ վարքագծի անորոշություն, որով պայմանավորված՝ առկա է նշյալ նորմի վերստին ուսումնասիրման, քննարկման և հստակեցման անհրաժեշտություն:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով և ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի և կից փաստաթղթերի, այդ թվում՝ դատական ակտերի, նախնական ուսումնասիրության արդյունքներից, դատական կազմը գտնում է, որ դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մասամբ մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

1) «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի վերաբերյալ

Դիմումին կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթը դիմողի նկատմամբ չի կիրառվել:

Անհատական դիմումին առաջադրվող սահմանադրական և օրենսդրական պարտադիր պահանջներից, ի թիվս այլնի, նաև այն է, որ անհատական դիմում կարող է ներկայացնել այն անձը, որի նկատմամբ դատարանի կողմից կիրառվել է վիճարկվող նորմատիվ իրավական ակտի դրույթը:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը, ելնելով նշյալ սահմանադրական նորմի իրավակարգավորումից, սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

- ա) երբ առկա է դատարանի վերջնական ակտը,
- բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,
- գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ հիմքի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը Սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

դատական կազմը գտնում է, որ վերոնշյալ դրույթի մասով անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը ենթակա է մերժման:

2) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ

Սահմանադրական դատարանն իր՝ 2012 թվականի փետրվարի 24-ի ՍԴՈ-1009 որոշմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ ամրագրելով, որ «...ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ այդ մասի առաջին նախադասության դրույթների սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, համաձայն որի՝ համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքել ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ՝ նկատի ունենալով, որ ներքոհիշյալ դեպքերում առանձին մասնակցի կողմից գույքի տնօրինման գործարք կնքելիս անհրաժեշտ է բոլոր համասեփականատերերի պոզիտիվ համաձայնությունը, ինչը կփաստի գործարք կնքող մասնակցի մոտ անհրաժեշտ լիազորության առկայությունը: Այդ դեպքերն են.

ա) երբ համասեփականատերերի իրավունքները պետական գրանցում են ստացել և սեփականության իրավունքի գրանցման վկայականում հստակ նշված է, որ գույքը պատկանում է կոնկրետ սեփականատերերի՝ համասեփականության իրավունքով,

բ) երբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված կարգով ու դեպքերում գույքի նկատմամբ իրավունքները և սահմանափակումները ծագում են օրենքի հիման վրա և ունեն իրավաբանական ուժ՝ անկախ պետական գրանցումից»:

Սույն գործում առկա Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2017 թվականի մայիսի 31-ի վճռով հիշյալ դատարանն ամրագրել է, որ «...հայցվորը չի ներկայացրել որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույցներ, առ այն, որ նա տեղյակ չի եղել վիճելի գործարքի կնքման մասին: Ավելին, հայցվոր կողմը, կրում է այն փաստի ապացուցման պարտականությունը, որ գնորդները իմացել են կամ ակնհայտորեն հնարավորություն են ունեցել ենթա-

դրելու, որ գրավադրվող գույքը հանդիսանում է համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված գույք և որ Լևոն Ոսկանյանը իրավունք չի ունեցել իր հայեցողությամբ տնօրինելու նշված գույքը:

Հայցվորը, որպես նշված փաստը հաստատող ապացույց, վկայակոչել է համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված գույք լինելը, որը դեռևս չի նշանակում, որ նա առարկել է, որ Լևոն Ոսկանյանը տնօրինի նշված գույքը, այն դեպքում, երբ հայցվորի կողմից անհամաձայնությունը հաստատող որևէ ապացույց չի ներկայացվել: Հարկ է նշել նաև, որ գնորդները չէին կարող ենթադրել, որ Մարիամ Ոսկանյանը հանդիսանում է գրավադրվող գույքի համասեփականատեր և որ առարկում է գույքը գրավադրելու դեմ:

Նման պայմաններում հարկ է հիշատակել, ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2007թ. 3-459/2007/ՏԴ/ որոշմամբ արտահայտած դիրքորոշումը, որում դատարանը եզրահանգել է, որ համատեղ սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված ընդհանուր սեփականության տնօրինման գործարքն անվավեր ճանաչելու համար բավարար չէ համատեղ սեփականության մասնակիցների ամուսիններ հանդիսանալու մասին գործարքի մյուս կողմի, մասնավորապես, գնորդի տեղեկացված լինելու փաստը, եթե միաժամանակ առկա են երկու պայմաններ

1. Համատեղ սեփականության մասնակցի մոտ վիճելի գործարքը կնքելու համար անհրաժեշտ լիազորությունների բացակայությունը.

2. Գործարքի մյուս կողմի այդ մասին իմանալը կամ դրա մասին ողջամտորեն ենթադրելու ակնհայտ հնարավորության առկայությունը:

Ինչպես արդեն վերևում նշվեց, վիճելի գործարքը կնքելիս, գնորդները, չեն իմացել ինչպես գույքը համատեղ սեփականություն հանդիսանալու, այնպես էլ համատեղ սեփականության մասնակցի գրավատուի կողմից անհրաժեշտ լիազորությունների բացակայության մասին և դրա մասին ենթադրելու հիմքեր չեն ունեցել:

Փաստորեն, սույն դեպքում հայցվորի կողմից չի ներկայացվել որևէ վերաբերելի և արժանահավատ ապացույց, իր կողմից հայցադիմումով վկայակոչած հանգամանքները հիմնավորելու համար, իսկ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2018 թվականի փետրվարի 22-ի որոշմամբ, վկայակոչելով նաև Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1009 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, նշել է, որ «...Վերաքննիչ դատարանը ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ Սահմանադրական դատարանի դիրքորոշումների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի լույսի ներքո գալիս է այն հետևության, որ համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք պետք է ունենա կնքելու ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ՝ նկատի ունենալով, որ գործում է համասեփականատերերի համաձայնությամբ դրա տնօրինման իրավունքի, ինչպես նաև գործարք կնքող անձի մոտ գործարքը կնքելու իրավունքի ու **անհրաժեշտ լիազորության առկայության՝ օրենքով նախատեսված նախապայմանը:**

Վերաքննիչ բողոքի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 231-րդ հոդվածի հիմքով ներկայացված այն փաստարկը, որ Մարիամ Ոսկանյանը չի տվել իր համաձայնությունը իրեն համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքի գրավադրման համար, Վերաքննիչ դատարանը անհիմն է համարում հետևյալ պատճառաբանությամբ.

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ համատեղ սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված՝ ընդհանուր սեփականության տնօրինման գործարքն անվավեր ճանաչելու համար բավարար չէ համատեղ սեփականության մասնակիցների՝ ամուսիններ հանդիսանալու մասին գործարքի մյուս կողմի տեղեկացված լինելու փաստը, քանի որ ընդհանուր սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված՝ ընդհանուր սեփականության տնօրինման գործարքը մնացած մասնակիցների պահանջով կարող է անվավեր ճանաչվել միայն այն դեպքում, եթե ապացուցվի, որ գործարքի մյուս կողմն իմացել է կամ ակնհայտորեն պետք է իմանար գործարք կնքելու անհրաժեշտ լիազորության բացակայության մասին:

Մինչդեռ սույն գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ Աննա Համբարձումյանն ու Մայա Հարությունյանն իմացել կամ ակնհայտորեն պետք է իմանային 30.11.2011 թվականի փոխառության և անշարժ գույքի հիփոթեքի պայմանագիրը կնքելիս Լևոն Ոսկանյանի մոտ գործարքը կնքելու համար անհրաժեշտ լիազորության բացակայության և այն մասին, որ առկա չէ Մարիամ Ոսկանյանի համաձայնությունը այդ գործարքի վերաբերյալ: Գործարքը կնքելիս ներկայացվել է ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստ-

րի պետական կոմիտեի կողմից տրված սեփականության իրավունքի վկայականը և ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Մարաշ տարածքային ստորաբաժանման կողմից 30.11.2011 թվականին տրված թիվ 00099409 միասնական տեղեկանքը, որոնց համաձայն նշված հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ գրանցված է միայն Լևոն Ոսկանյանի սեփականության իրավունքը,»:

Վերոնշյալ դատական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցում իրացված չէ Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1009 որոշմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումը, մասնավորապես, առ այն, որ համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքել ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ, նկատի ունենալով, որ նշված դեպքերում առանձին մասնակցի կողմից գույքի տնօրինման գործարք կնքելիս անհրաժեշտ է բոլոր համասեփականատերերի պոզիտիվ համաձայնությունը: Մինչդեռ նշված դատական ակտերում դիմողի՝ որպես համասեփականատիրոջ կողմից իր հայեցողության իրացման արդյունքում տրված պոզիտիվ համաձայնության առկայության կամ բացակայության, վերջինիս բացահայտման վերաբերյալ որևէ դիրքորոշում առկա չէ: Բացի դրանից, երկու դատական ակտերում էլ բացառապես շեշտադրված է, որ առկա չէ ապացույց այն մասին, որ գործարքի մյուս կողմն իմացել կամ ակնհայտորեն պետք է իմանար համապատասխան գործարքը կնքելիս դիմողի ամուսնու մոտ գործարքը կնքելու անհրաժեշտ լիազորության բացակայության և այն մասին, որ առկա չէ դիմողի համաձայնությունն այդ գործարքի վերաբերյալ:

Ելնելով վերոշարադրյալից՝ դատական կազմը գտնում է, որ չնայած այն հանգամանքին, որ վիճարկվող դրույթի վերաբերյալ առկա է Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1009 որոշումը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով գործի քննությունը ենթակա է ընդունման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Մարիամ Ոսկանյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի մասով մերժել:

2. Առաջարկել Սահմանադրական դատարանին աշխատակարգային նիստում քննարկել «Մարիամ Ոսկանյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը քննության ընդունելու հարցը:

**Նախագահող՝
Անդամներ՝**



31 օգոստոսի 2018 թվականի
ՍԴԴԿՈ/Ժ-1